

## ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Չու է Թիւզելիս. Օջախ կուլի գիւղ. Հին և նոր Շիրակ. Ճանապարհ գծուարութիւնը. Փոստի առաջին կայարանը. Ազգը Զախշախ գիւղը նորա հնութիւնը. Ռուս վարչութեան կենտրոնը. Արդինայի հնութիւնները. Ռուզեկիցու:

Սկսած այս 1902 թուականի Ապրիլի 12-ից անցել է ուղիղ 24 տարի, որ վերջին Բուս տաճկական պատերազմի յայսարարելուց և սկսուելուց ամենաճիշտ մի տարի յետոյ ես առաջին անգամ ոտք դրի Շիրակի այն բաժնում, արևմտեան բաժնում, որ պատերազմից առաջ Տաճկաստանի տիրապետութեան տակ էր:

Կի բուռն ցանկութեամբ նորանոր, անծանօթ երկրներում նոր տեսարաններ, երեսյթներ տեսնելու և բազմազան տպաւորութիւններ ստանալու՝ ես գոհութեամբ լսեցի իմ իշխանութեան հրամանը գնալ անմիջապէս Կարս քաղաք ներկայանալ զօրաբանակի գլխաւոր բժշկին և նորա կարգադրութիւնն ստանալ. Ոչ մի գժուարութիւն, ոչ մի խոշնդուռ աչքիս չեն երեսում: Բայց գժուարութիւնները բազմաթիւ եին, երկիրը մի տարի առաջ ինչպէս յիշեցի, թուրքերի տիրապետութեան ներքյ էր և անկարդ գրութեան: Զկային փոքր ի շատէ, կանոնաւոր ճանապարհներ, երթեւեկութեան յարմարութիւններ, ճանապարհորդական ապահովութիւն և աւելացներով դորա վերայ այն, որ Բուսաց զօրքը տանատակ էր տուել այժմ այդ երկիրը, անցել էր մինչև Կարին, ահռելի ճակատամարտներ էր ունեցել մի քանի ամիս առաջ այդ ընդարձակութեան վերայ, զաղթեցրել էր կամ փախստի էր մատնել շատ գիւղեր, երկիրը ամպայութեան կերպարանը էր ստացել և նորաբայս իշխանութիւնը դեռ հաստատ և անդրդուելի արմատներ չէր:

ճգել և այլն. ահա այն դժուարութիւնները որոնք աչքիս չելն երեւում:

Այդ միջոցին դլխաւոր զօրաբանակը ցրուած էր Կարինի (Արզրումի) շրջակայքում և թէպէտ Սան Ստեփանյի դաշնադրութեան համաձայն պատերազմական գործողութիւնները դադարել էին, սակայն երկրի պատերազմական գրութիւնը շարունակում էր և իրար թշնամի զօրախումրերը դեռ բռնած էին իւրեանց տեղերը: Իսկ պատերազմի գլխաւոր վարչութեան կենարոնը Կարսն էր, ուր՝ ըստ հրամանի՝ ես պէտք է զնայի:

1878 թուականի Ապրիլի 12 էր, որ ես հրաժարական տուի Ալէքսանդրապօլին ու փոստի կառք նստած անցայ Արչափայ գետը, որ այդ ժամանակ չըւնէր այն կամարաշէն քարե կամուրջը, որ յետոյ գետի հեղեղատ հոսանքին զոհ գնաց: Դուրա փոխարէն շինած էր փայտէ ժամանակաւոր կամուրջ ուստ զօրքի սահմանն անցնելուց յետոյ:

Ի հարկէ ամենին յայտնի է, որ մինչև վերջին պատերազմը երկու պետութիւնների սահմանը Ալէքսանդրապօլի մօտ Արփացին էր, ուր չկար կամուրջ: Սորա բաղակայութիւնը շատ դըժուարութիւններ էր յառաջ բերում, երբ աննշան գետը յորդառատ անձրեւների և հալուող ձիւների շնորհիւ փրփրագէց ալիքներով հոսանքի էր փոխուում: Այս հանդամանքը ժամանակաւոր արդելը էր հանդիսանում Շիրակի թրքական մասի գիւղացիների համար, որոնք իւրեանց գիւղանտեսական բերքերը սայլերով շարունակ բերում, ծախում էին Ալէքսանդրապօլում, այն է իւզ, պանիր, ձէթ, գարի, ցորեն, աթար և այլ նիւթեր:

Առաջին գիւղը, որ հանդիսացաւ իմ առաջ Արփաչայի առաջինեայ բարձրութեան վերայ, զուտ հայաբնակ Օջախկուլին էր թրքական կայսրութեան ամենավլերջին գիւղը Ալէքսանդրապօլի ամբողջի դէմ: Շրջակայքը լողում էր ցեխի ու ջրի մէջ, ըստ որում այդ օրերում անդադար տեղացող անձրեւները իիստ առատ էին և մեր գլխի վերը կուտակուած սկ ամպերը թանձրութեամբ ծածկել էին կապոյտ երկնակամարը: Հինդ ձի լծած իմ փոստակառքը դանդաղ բայլերով հազիւ կարողանում էր ձեղբել անպիտան և անյարմար ճանապարհի փափկացած հողը:

Օջախկուլի գիւղի բարձրութիւնից կարելի էր գիտել ընադակ հորիզոնը, ուր երեւում էին գետի երկայնութիւնը, Ալէքսանդրապօլ քաղաքը, նորա ամրոցը, հեռաւոր գիւղերը և

Արագած լեռան ձիւնածածկ դադաթը, միով բանիւ Ծօրագեալի մնջադյն մասը:

Նայելով այդ ընդարձակութեան վերայ և տեսնելով նորա ներկայ դրութիւնը որ Ծիրակը փոխուել է Ծօրագեալի, ևս ակամայ խորասուղւում էի հին' պատմական անցած՝ անդարձ գնացած ժամանակների մէջ, երբ Ծիրակը դեռ ևս Ծիրակ էր՝ մօտ չորս հազար տարի առաջ:

Ես յիշեցի հայոց պատմութիւնից որ Ծիրակ գաւառը ժառանդել է իւր անունը Հայկայ սերնդից ծագած Ծարայից, որի շատակերութեան և շատ երեխաներ ունենալու պատճառով, նորա հայր Արմայիս նաշապետը բնակեցրեց նորան այս պըտազաւէտ և բերրի Ծիրակ գաւառում: Արմայիսը հասկացաւ իսկոյն և եթ որ Ծարայի շատակերութիւնը կարող է բաւականութիւն գտնել միմիայն Ծիրակայ դաշտերում: Ծարայի պէտ շատակերին կարող էր յագեցնել միմիայն Ծիրակը: Այդ է պատճառը որ Խորենացի Մովսէսը պահպանել է մեզ համար մի ժողովրդական առած, որ այն ժամանակի հայ ժողովրդի շրթունքներում պտտուելով՝ մի անգամից և եթ պատկերացնում էր Ծարայի բնաւորութիւնը:

«Թէ քո Ծարայի որկորն է,  
«Մեր Ծիրակայ ամբարք չեն»:

Ծարայի ոսկերոտիքը փտելուց մինչև մեր օրերը քառասուն դար անընդհատ միմանց յաջորդել են և Ծիրակ գաւառը չէ կորցրել իւր պարարտ պտղաբերութիւնը և իւր պատմական նշանակութիւնը: Նորա հրաշալի աւերակները կենդանի լեզու են և դարերի պատմութիւն: Արշակունեաց հարստութեան աւերակների վերայ չորս և կէս դար յետոյ ազգայնութեան գրօշը բարձրացնող Հայաստանը, Բագրատունեաց ցեղի արժանաւոր Ներկայացուցիչների ձեռքով, իւր յոյսը դրեց Ծիրակի վերայ, որ այժմ ևս ցցց է տալի իւր ծոցումը պահպանած բաղդազուրկ ազգի անցեալ փառքը՝ թաղած Անի բաղաքի հիասքանչ փլատակների տակ:

Նախ քան Խուսաց վերջնական տիրագեառութիւնը Ծիրակը կամ այժմեան Ծօրագեալը փոփոխակի անցնում էր երթեան թուրքերի և երեխմն պարսկց ձեռքը: ուստի նա դարձել էր համարեա ամայի, այնպէս որ 1830թուականի թիւրքիայի հայ գաղթականները գտան այդ տեղ ընդարձակ գիւղերի աւերակներ, որոնց վերայ և հաստատուեցին: Սակայն այժմ նա նեղ

է արդէն և չէ կարողանում կերակրել չափազանց բազմացած աղջաբնակութիւնը:

Այս մտածութեան մէջ էի, երբ յանկարծ ամպերը որոտացին, երկնքում երեաց աշագին երկարութեամբ բեկրեկուած փայլակը և շատ հնում տրաքեց կայծակը, ևս և ընկերս ուշքի եկանք, թողինք հեռաւոր մտածմունքները և նայում էինք թէ ինչպէս մեր կառապանը փայտի օգնութեամբ աշխատում էր մաքրել ցեխից՝ կանդ առած կառքի անիւները, որոնց իւրաքանչիւրը իւր շուրջը կուտակելով աշազին մնութեամբ թանձր մանուցիկ ցեխ, գժուարացնում էին կառքի շարժը և ուժապառ անում ձիանցը:

Ընկերս մի երիտասարդ ոուս բժիշկ էր, գնում էր նյոն նպատակի համար՝ որպէս և ես, գնում էինք միասին մեր մեծաւորի հրամանով և այդ պատճառով էլ ծանօթացել էինք իրար՝ նյոն օրը կառքի մէջ. թէ ինչքան անյարմար և ցեխ էր ճանապարհը, բաւական էր յիշել որ 4—5 ժամում մենք հաղիւ անցել էինք 5 վերստ:

Պատերազմի ժամանակ ոուս կառավարութիւնը կարգադրել էր բանալ փաստային ճանապարհ նոր նուածած երկրում Ալէքսանդրապոլից մինչև Արզրում և առաջին փաստի կայարանը գտնուում էր մեր առաջ դրած Մօլլամուսայ թրբարնակ գիւղում, ուր մենք գնում էինք և որից ընդամենը 6 վերստ էր մինչև Ալէքսանդրապոլ:

Պատերազմի աւերիչ հետեանքը կարելի էր տեսնել հենց Արքայացի աջ՝ թրբական ափում, ուր Օջախկուլից փոքր հեռու, դէպի հարաւ, քարը քարի վերայ կուտակուած շինութիւնների աւերակներ էին սկսուած. Այդ տեղ, պատերազմից առաջ կանգնած էր թուրքաց մաքսատունը, ուր թուրք պահապան զինուորը՝ մերկացրած սուրը ուսին՝ յետ ու առաջ պտտուելով պահպանում էր ճանապարհը և արգելում անցաւորին՝ մինչև կյայտարարէր մաքսապետին, Կանգնած էր այդ տեղ և մաքսապետի կացարան-տունը, որ նյոնպէս աւերակ դարձած, քարուքանդ եղած, յիշեցնում էր ինձ այն հիւրասիրութիւնը, որ 4—5 տարի պատերազմից առաջ վայելում էի թուրք մաքսապետից.

Խոկ այժմ այդ տունը, մաքսատունը, զօրանոցը, ձիանոցը ու սահմանապահների այլ շինութիւնները՝ բոլորը, բոլորը աւերակ էին դարձած, քարուքանդ եղած և փայտեղէն մասը

անհետացած, կարծես գորանց քանդելը անհրաժեշտ էր, կարծես ներկայ ախուր աւերակները ում և է հարկաւոր էին. Այդպէս է ամենայն տեղ պատերազմը...

Երեկոյեան գէմ վերջապէս կառըը, կամ աւելի յարմար է սայլակը, կանգնեց Մօլլամուսա գիւղում մի թշրւառ երրմիթի առաջ. Դա փոստի կայարանն էր. Գիւղի մերկանդամ երեխայըը ցրտից դողալով հեռու կանգնած զննում էին մեզ. Սայլապանները, որ Համախու գաւառի հայեր էին, բնու աչքերով, անձրւից թրջուած շորերով, դանդաղ և ծյու բայլերով եմբու եցին մեր շուրջը, մինը յորանջում էր, միւսը ծռծրակը քորում, երրորդը մորթէ զինարկը դիմից վերառած մէջը նաև յում, և ինչ ինչ նպատակներով խորհուրդ էին տալիս մեզ գնաց հետեւալ կայարանը, Ղպրչազչախ գիւղը.

Տեսնելով կայարանի ողորմելի արտաքինը և յուսալով թէ հետեւալ կայարանը գուցէ աւելի յարմարութիւն ունենայ գիշերելու համար՝ մենք համաձայնեցինք շարունակել ճանապարհը. սայլապանները ընդհանուր օգնութեամբ լծեցին սայլակը և մեզ ճանապարհ դրին, որպէս զի իւրեանց բնելու տեղը նոյն՝ հիւրերի սենեակում լինի փոքր ինչ ազատ:

Երեկոյեան ժամի իններրոգն էր որ մենք զնում էինք մի ընդարձակ դաշտի մէջ. Մուլթը պատել էր գետինը, չորս կողմերու ոչինչ չէր երևում, ինսա ճանձրալի էր մեզ համար որ կենդրունացած մեր մէջ՝ ամեն տեսակ հեռաւոր ու մօտաւոր, շատ անկապ և վայր ի վերց մտածմունքների մէջ էինք խորասուզում շանձրալի էր ճանաւանդ զանգակի միանման ձայնը, որ դողանջում էր աղեղի տակ: Դորան երբեմն միանսւմ էր սայլապանների ձայնը, որ ուղղում էին դէպի ձիանքը՝ նորանց ջատագովելու և արագացնելու համար:

Սակայն ընութիւնը այդպէս չմնաց. Խաւարը ևս առաւել թանձրացաւ՝ մութն աւելի շրջապատեց մեզ և սկսեց տեղալ սարսափելի կարկուտ իւր սովորական աղմուկով: Ըմպերի ստէպ սուէպ որսամունքները դղբղեղնում էին երկիրը և գողգողուն փայլակը, վայրկենական հրացայտ լոյս արձակելով բոլոր դաշտի վերայ, կրկին արագ անհետանում էր և մեզ աւելի կուրացնում: Լսողութիւնս լարած շարունակ սպասում էի թէ Երբ արգեօք լսելի կլինի մի շան հաջոց՝ իրրե նշան գիւղի մօտիւ կութեան, բայց կարկտի տակ, որուման և փայլակի ներքեա ո՞ր շունը պէտք է դուրս գար իւր բնից մեզ հանգստացնելու:

Սայլապանները թէև վաղուց հաւատացնում էին, թէ զիւղը և կայարանը մօտիկ է, բայց մեր անհամբերութեանը վերջ չկար:

Վերջապէս, վերջապէս անձրեխ տակ, մթան իաւաբի մէջ կանգ առանք մի հասարակ երթիքի առաջ, որ փոստայի կայարանն էր: Զիանըը թափահարեցին իւրեանց, փոնդացին, այլապանները դուրս կանեցին միւս, տեղի սայլապաններին, որոնք կամաց-կամաց ներս տարան ճանապարհի մեր իրեղէնները:

— Այդ արկղը կամաց վերցրէք, զգուշութեամբ տարէք, մշջ կոտրուելու բաններ կան, գեներալ Հէյմանի համար է... զգոյշ... շշոյշ... կէս սպառնալիքով կէս պարծենալով առում էք բժիշկ ուղեկիցա:

Արդարե ուղեկիցս արկղի մշջ թիֆլիցից Ղարս էր տանում մի արկղ զանազան եւրոպական իմիչքեղէններով որ յանձնել էին նորան փոխարքայի դինաւոր վարչութիւնից գեներալ Հէյմանի համար, որ այդ միջոցին, Լօրիս-Մելիքովի վերադարձից յետոյ, վարում էր զօրաբանակի գլխաւոր հրամանատարի պաշտօնը և վարդոցաւով (արփուս) հիւանդ պակած էր Կարսում: Շնորհիւ այդ արկղի՝ ուղեկցիս տուած էր վկայաթուղթ որ նա սուրհանդակ է (կուրիկեր) որպէս զի փոստի կայարաններում արգելքի չհանդիպի:

Մեղ տարան ներս. իիստ անձրեխց և կարկտից մենք չարաշար թրջուած էինք և դողում էինք երեկոյեան ցրտից: Ամենից առաջ հզգացինք թէ, խմելու, որից և բաւական տաքացանք ու զուարթացանք և ես սկսեցի զննել շուրջը: Մեր կացարանը՝ կամ փոստի կայարանը մի հատ գիւղական սենեակ էր (օդայ) միացած գոմի հետ, ուր կապած էին փոստի 24 հատ ձի: Նոյն սենեակում մեզ հետ միասին զիշերում էին փոստում ծառայող սայլապանները, ունենալով իւր շուրջը թափթիած արեխներ, ցեխոս գուրաներ ու փաթթաններ, այլ և ձիանց պատկանելի կաշիներ, վիզողեր, աղեղներ, զանդակներ, մարակներ, ծածկոցներ և պահանջման համար կայարաններ, որոնց հոտը խառնուելով ձիանց և գոմի հոտերի հետ՝ մի տեսակ բուրումն էր հասցնում մեր հոտոտելեաց:

Առաւօտ, Ապրիլի 13-ին, մինչդեռ սուրհանդակուղեկից քնած էր, ես դուրս եկայ մառախլապատ սենեակից, որպէս զի ազատ օգ շնչէի և փոքր ի շատէ զիւղը զննէի: Ընկերացաւ ինձ կայարանի տան տէր՝ նոյն զիւղացի Պետրոս Նաղարեանցը:

Կըզըլչակէչակը զուտ հայարնակ գիւղ է մօտ 60 տնով, բարակ գետակի ձափ ափում, 20 վերստացակ հեռու Ալէքսանդրապոլից: Բնակիչները շատ տարիններ առաջ ժողովրած են այս տեղ՝ Փամբակից, Ալաշկերտից և այլ զանազան տեղերից: Տները ըստ մեծի մասին բարաշխն են, գետնի երեսին և միաւ յարկ և մանաւանդ իրար՝ ինչպէս Երևանի նահանգի բոլոր գիւղերում: Փողոցները նեղ, ծուռ, անկանոն և աղտոտ:

Մի հատիկ գիւղական եկեղեցին սրբատաշ բարից և փայտաշէն ծածկով շինած էր 9 տարի առաջ գետակի բարձրադիր տիփ վերայ: Արևի առատ ճառագայթներից հազիւ մի քանի շող թափանցում էին եկեղեցու: Ներսը նորա լուսամուտների փոքրաւթեան պատճառով Գիւղական երկու քահանայ իւրաբանչիւր որ, առաւօտ և երեկոյ, եկեղեցում պաշտօն էին մատուցանում մի քանի ծեր կանանց ներկայութեամբ:

Նկատելով ինձ և նազարեանցին գիւղականները կամաց կամաց խմբուեցին մեր շուրջը և հետաքրքրութեամբ զննում էին: Նրբ խօսքը հասաւ մանկանց կրթութեան, յայտնուեց որ գիւղը երբէք չէ ունեցել դպրոց, բայց ամենըն էլ խօսով պատրաստութիւն էին յայտնում պահպանել դպրոցը՝ եթէ դա կրացուի, մինչև անգամ նիւթեապէս ապահով Պետրոս Նազարեանցը պատրաստականութիւն յայտնեց կանգնեցնել շինուաթիւնն իւր հաշոտով և նպաստել, եթէ միայն դործն սկսի և վերահսու լինի առաջնորդը, որ պահ միջոցում Աղուանեան Գրիգոր վարդապետն էր Կարսում:

Կըզըլչակէչ գիւղը, որպէս և Ծիրակի բոլոր նորանուած դաշտավայրը, պաղաբեր հող ունի և մեծ քանակութեամբ արտադրում է գարի և ցորեն, որ այլ հողային բերքերի հետ, գեռ ևս թրբական տիրապետութեան ժամանակ վաճառ էր հանուում Ալէքսանդրապոլ: Կովկասեան զօրաբաժնի համար պաշար պատրաստելու գործում միշտ նպաստաւոր է եղած այդ երեխը: Հարիւրաւոր սոյլերի շարքերին վերջ չէր լինում նախկին ժամանակներում, երբ Ալէքսանդրապոլ էին բերւում յիշեալ երկրի բեռքերը:

Սակայն պատերազմը յետոյ կերպարանափոխեց պահ երեխը, շատ գիւղեր բալորովին աղատուեցին թիւրք տարրից որ կամովի կամ ակամայ տեղափոխուեց Թիւրքիա: Մի քանի հայ գիւղեր, հակառակ իւրեանց կամքի, հեռացան իւրեանց վայրից գեպի լեռնոտ տեղեր: Բոլոր աղատուած գիւղերը իւրեանց հո-

զարաժիններով անցան ուսւ մայականների, ոուս դուխաբոռ-  
ների և անշնորհ յոյների ձեռքը որոնք վատ հողագործներ էին:

Այս կողմի բոլոր գիւղերի, որոց թւում և Կըզլչափիչ  
հողաբաժինները թափիով սեպչականացրած էին բնակիչնե-  
րին: Պատերազմից մի քանի ժամանակ առաջ թուրք կառավա-  
րութիւնը հարկադրել էր ժողովրդին գնել (թափի անել) իւր-  
ձեռքի բոլոր հողերը, իսկ տասանորդի հատուցումը պետական  
գանձարանին շարունակել նախկին կարգով:

Իմ ճանապարհորդական հետաքրքրութիւնս նկատելով ինձ  
շրջապատող գիւղացինները իմ ուշադրութիւնս հրաւիրեցին քա-  
րաշէն փոքրիկ ամրոցի վերայ, որ կանգնած էր գիւղի արե-  
մտեան կողմում, բարձրադիր գետի վերայ. Մենք մօսեցանք-  
նորան: Գիւղացիք անուանում էին նորան ղուլա, որպէս և սո-  
րա նման միւս բոլոր փոքր ամեղոցները:

Այս զուլան սրբատաշ քարից, քառանկիւնի ձեռով ունի 26  
քայլ երկարութիւն, 14 քայլ լսյնութիւն: Ներս մանելով միակ-  
հարաւային դռնով մենք տեսանք որ ամրոցը եղել է երկյարկա-  
նի, միացած քարէ աստիճաններով: Առաստաղը քանդուած էր  
և պատերի վերին մասում շինուած են մարտկոցներ փոքրիկ նեղ-  
պատուհաններով հացանաձգութեան համար:

—Գիտէք, սորա քարերը բերուած են Մարմաշէն վան-  
քի կամրջի աւերակից, Ղանլըշ գիւղի մօտ, և Անի քաղաքի-  
աւերակներից, Խօսեցին գիւղացիք: Արդարև ես նկատեցի որ-  
պատերի վերայ զիր ցան հացրած են խաչքարերի բեկորներ:

—Դուրսը՝ դրան վերև կայ թուրքերէն դիր, կարդացող-  
ներն ասում են որ 168 տարի առաջ է շինուած դուլան, բա-  
ցատրեցին գիւղացիք: Դուրս գալիս նկատեցի թուրքերէն ար-  
ձանազրութիւնը:

Ապա գիւղացիք պատմեցին որ սորա շինողը եղել է ոմն  
թուրք Ղարաբէգ, իրը իւր պետառթիւնից անկախ տիրտպետող  
այս երկրի, որ գիւղական հասարակութեան օգնութեամբ շինել  
է այս զուլան լէգինների յաճախ յարձակմունքից պաշտպանուե-  
լու նպատակով: Այսպիսի մի մի զուլա կայ Զոմուշլու, Ուզուն-  
քլիսա և այլ գիւղերում:

Ղարաբէգը, նշն գիւղացոց հաղորդելով, բնակւում էր  
Մաղաս բերդում: Անի քաղաքի աւերակների մօտ և ապա իւր  
ապստամբութեան և անհնաղանդութեան համար կախաղանի է:  
Հանուել թուրք կառավարութեան կարգադրութեամբ: Ղուլան:

Նկատողութեան առնելուց յետոյ՝ ժողովրդի հետ վերադարձանք գիւղ։

Երբ 1877 թուի Ապրիլի 12-ին Ռուսաց զօրքը Շիրակում անցաւ պետութեան սահմանը և արագ նուածեց Շիրակի արևմտեան մասը, Ռուս կառավարութիւնն իսկոյն և եթ իւր վարչութիւնը մտցրեց նորանուած երկրում և այդ վարչութեան կենդրանը զետեղուեցաւ աշա այս Կըզլանչափ գիւղում, բայց երբ իձուղին Ալէքսանդրապոլից անցաւ մինչեւ Կարս, վարչութիւնը տեղափոխուեց մերձակայ Արգինա գիւղը, որ որչափ այդ միջոցին աննշան էր, իբրև մի փոքրիկ թրքաբնակ զիւղ, այնքան նա նշանաւոր է եղել Բաղրատունեաց հարստութեան ժամանակ՝ տամներորդ դարի վերջում։

Խաչիկը կաթուղիկոս ընտրուելով՝ յատուկ կաթուղիկոսարան և Տրդատ ճարտարապետի ձեռքով մի հոյակապ եկեղեցի շինեց Արգինայում, շինեց և այլ երկու եկեղեցի և գրատուն և 992 թուին վախճանուելով, թաղուեց իւր շինած եկեղեցու հիւսիսային կողմում։ Այժմ չեն երեսում այդ տեղ ոչ կաթուղիկոսարան, ոչ եկեղեցի, ոչ էլ արժանաւոր Խաչիկ կաթուղիկոսի գերեզմանը։ Մնացել է միայն եկեղեցու մի պատ իւր կամարով և հայ արձանագրութեան մի քանի բառ նորա վերայ, որից չէ կարելի իմանալ ո՞ր եկեղեցին լինելը։

Շիրակն այնպիսի մի տեղ է, որ իւրաքանչիւր մի կէտ, մի բլուր, մի ժայռ և այլն ունի իւր փառաւոր անցեալը, իւր պատմութիւնը և երբ Արգինայի անցեալի մասին մի քանի տեղեկութիւն հաղորդեցէ ինձ ուղեկիող գիւղացիներին, նորանք զարմացմամբ գլուխները շարժում էին և ասում «փառք քեզ, Վասուած, ինչպէս է փոխում աշխարհ», թող ոչ ոք չպարձենայ իր գլխով։

Վերադարձայ կայարան, ուր, թէե առաւօտը վաղուց անցել էր, սուրհանդակ ուղեկիցս գեռ ևս հանգիստ քնած էր այն գարշահառութեան մէջ։ Յետոյ էլ ես համոզուեցայ որ նա շատ քնուկ մարդ է, անվրդով և անհոգ։ Զարթեցրի նորան և պատրաստուեցինք շարունակելու մեր ճանապարհը,

Բ.

Գոմուշու և Շահնալոր գիւղերը. Դաշտավայր. Փալքը կան գիւղի եռդառքինը. Ճալայ գիւղի թշուառութիւնը. Գիւղադպարս գիւղը և նորա ընդարձակ շրջակային. Եթեկ պատեզազմէ գաշտ. Խոլֆովլի և Փարգիս գիւղերը. Դաշտային ջրասականութիւնը. Գեներալ Հէյմանի մակուան լուրը:

Լծած սայլակը մօտեցաւ. Կայարանի դրանը. Մեր իրեղէնները դարսեցին նորա մէջ, որոց թւումն և խմիցների արկղը. Բժիշկը, երեկուայ նման, նորից յիշեցրեց սայլապաններին՝ որ զգսց գնեն արկղը, որովհետև նա գեներալ Հէյմանի համար է. Գեներալի անունը յիշելիս սայլապանները առանձին հետաքրքրութեամբ էին զնուում արկղը՝ որոնելով նորանում մի որ և է անսովոր բան, թէև նա շինած էր տախտակից՝ իբրև ամենահասարակ արկղ:

Սայլակը շարժուեց, զանգակը դողանջեց, և կարճ ժամանակից յետոյ կըզըլչաչափ գիւղը թողինք մեր յետև, եղանակը փոքր ինչ ցուրտ էր, երկինքն ամպամած, բայց անձրև չկարծանապարհը ցեխ էր. Այս և այն կիտում հանդիպում էին գիւնուրներ, որոնք կամ գալիս էին կամ գնում, հանդիպում էին ուղտեր, բեռնակիր Փուրգան-սայլեր, գիւղական սպյլեր, ծիաւորներ և այլն. Ութ վերստ անցած՝ մեր առաջն եկաւ Կարսչայ գետը, որ այդ միջոցին անձրէններից և ակունքների ձիւներից մեծացել էր այնքան, որ անկարելի էր անդնել՝ եթէ կամուրջ չլինէր. Ծոտեցանք գետի ձափ ափին:

Այդ տեղ գետի ձափ և աջ ափում բացւում է գեղեցիկ կանաչազարդ հովիտ, որից յետոյ գետը մտնում է մի խոր ձոր՝ երկու կողից ևս պատած սեպաձեւ մերկ ժայռերով. Դետի վերայ շինած էր ժամանակաւոր փայտէ կամուրջ երթևեկութեան հեշտութեան համար. Ըստ երեսութին թուրք կառավարութիւնը մի առանձին կարիք չէր զգում և չի էլ զգացել կամուրջ շինելու այդ տեղ:

Անմիջապէս ձափ ափի դեղեցկատեսիլ հովտում կանգնած է մի աւերակ ամրոց, որի նմանը մենք տեսանք կըզըլչախչախում, իւր պատերով, լուսամուտներով և մարտկոցներով. Նորա մէջ դարսուած պահում էին Զոմուշլի գիւղի աւերակ տների փայտեղէն մասերը. Իսկ Զոմուշլի աւերակները սիռուած էին նոյն ամրոցի մօտ. Այս գիւղը երբեմն եղել է զուտ հայ-

բնակ, որի հայ բնակիչները կօմս Պատկերչի օրով 1830 թուին գաղթել են Ալէքսանդրապոլի գաւառը և այժմ կազմում են Դիլզ-քեանդ և Նգեանլար գիւղերը:

Հայերից շատ տարի յետոյ՝ երբ վաթունական թուականներում սկսուեց Կովկասեան լեռնաբնակների գաղթը դէպի Թիւրքիա, Կարսի կողմերը եկած չերքեղների մի խումբ բնակութիւն հաստատեց այս գիւղում: Վերջին պատերազմի ժամանակ երբ ոռուաց զօրքը կենտրոնացել էր մերձակայ Քիւրագղարա գիւղի շրջակայքում, գլխաւոր հրամանատար Լօռիս Մելիքովը նկատելով որ Զոմուշլուի չերքեղ բնակիչները լըրտեսութեամբ ծառայում են Մուխտար փաշային և նրանց մերձաւորութիւնը տեսակ տեսակ պատճառներով այնքան էլ հառձելի չէ, կարգադրել է իսկցյան և եթ հեռացնել գիւղի բոլոր բնակիչներին դէպի Զարիշատ, Կարսից հիւսիս, նոր բնակութիւն հաստատելու: Պատմում է՛ն իրքե թէ չերքեղները իւնդրել են հրամանատարին թոյլ տալ նրանց վերադառնալ կըրկին իւրեանց նախկին տեղերը Կովկասեան լեռներում, սակայն բացասութիւն ստանալով քանդել են իւրեանց բնակարանները և լաց ու կոծով հեռացել են դէպ Զարիշատ:

Անցանք գետը, նորա աջափնեայ հովտի վերայ երեսում էին Շահնալար գիւղի աւերակները, որ պատկանում էին Խառն բնակուող Հայերին և թուրքերին: Թուրքերը փախել էին իւրեանց կամքով ոռուների մօտենալու ժամանակ, իսկ Հայերը պատերազմի միջոցին ցրուել էին Ալէքսանդրապոլի գիւղերի վերայ: Երբ ես Յունիսին արդէն վերադառնում էի, Շահնալարի հայ բնակիչները վերադարձած շէնացրել էին իւրեանց քանդուած բնակարանները և մինչեւ անդամ մտադրուած էին, հրակիրելով մի քանի շայ գերդաստաններ, չընդունել այլ ևս թուրք գրացիներ՝ եթէ սոքա կուկենային կրկին վերադառնալ: Սակայն Շահնալարի հայերը չէին մտածում թէ ինչ փորձանք է պատրաստում նորանց և ուրիշների գլխին:

Երբ պատերազմը վերջացաւ, դաշինքը հաստատուեց, Կարսի նահանգը միացաւ Ռուսաստանին, այն ժամանակ կառավարութիւնը հարկաւոր համարեց համապատասխան կրկին վերադառնալ երկարութեամբ կազմակերպուեցին մի քանի ոռու գիւղեր ոչ մայս աւերակ մնացած տեղերում, ինչպէս Զոմուշլուն էր, այլ

և շէն գիւղեր, ինչպէս Շահնալարը, Արդինան ու այլ շատերը, կանխապէս հեռացնելով բնիկներին այլ տեղ, Յայտնի բան է, նոր բնակիչների հետ նորանում էին և գիւղերի անունները, քաց թողնելով հները:

Շահնալարի և ջումուշլուկի ընդարձակ հողերը առանց վարելու մնալով (գիւղերի աւերակ լինելու պատճառով) իմ վերադարձի ժամանակ, Յունիսին, ծածկուած էին բարձրահասակ երերուն խոտերով և գյոնդդյոյն դաշտային ծաղիկներով, Խոտհարբները, արօտատեղերը, վարելահողերը սարերն ու ձորերը միատեսակ ծածկուած էին վայրենի բյուսերով, որոնք քամու հոսանքի առաջ երբեմն խոնարհեցնում էին խմբովին իւրեանց ծաղկապսակ դադարեները և երբեմն նորից բարձրացնում էին նորանց. Ոչ մի գարու հետք, ոչ մի ցորենի նշյլ չէր երեսում այդ թարմ, անուշահոտ տարածութեան վերայ:

Այն միջոցին, երբ մեր սայլակը կամաց կամաց բարձրանում էր Շահնալարի դարիվերը, բժիշկ ուղեկիցս՝ աչբերը քեեռած Հէյմանի արկղի վերայ՝ ցածր երգում էր մի ինչ որ երգ: Յանկարծ լսուեց մեր դէմ սայլակի զանգակի ճայն. Կարսի կողմից գալիս էր փոստի սայլակով մի սպայ. Ընկերս հարց ու փորձ արեց գեներալ Հէյմանի առողջութեան համար՝ ցայց տալով խմէքների արկղը, բայց դրական ոչ մի պատասխան չստացաւ. Ուղեկիցս նորաւարա բժիշկ էր, Ռուսաստանից նոր եկած, առաջին անգամ ոտք գնելով կովկաս՝ նա չէր ճանաչում միւսների հետ և գեներալ Հէյմանին ու նորա աչբում կոպէկի արժէք չունէր Հէյմանի առողջութիւնը, բայց նորա փորացաւն ուրիշ բան էր:

Շահնալարից 4—5 վերստ անցած մենք հասանք Փալդրվան հայաբնակ գիւղը. որի մօտ, դէպի հարաւ դրած է միւս հայաբնակ գիւղը Քիւրագլարա, որ ամբողջ լուսաւոր աշխարհին յայտնի է թշրբառուսական պատերազմների շնորհիւա:

Փալդրվանը մի հասարակ գիւղ է, մօտ 30 տուն հայ բնակիչներով և մի հատիկ քահանայով. Այստեղ էր զետեղուած փոստի երրորդ կայարանը. Մինչև սայլակը կպատրաստէին և նոր ձիանք կլծէին, ես միջոց ունեցայ պտոյտ անել գիւղի մէջ՝ որ և է արժանայիշատակ բան գտնելու ժողովրդի աղքատութիւնը երեսում էր հէնց նորանդ աների շինութիւնից. Տները ցածր, գետնի երեսին կպած, անկարգ, թշուառ տեսքով, առանց միօղոցի. Գուցէ սորանց եկեղեցին աւելի լաւ լինի, մտածեցի

ես և աչքերով որոնեցի, բայց տեսայ որ գիւղի բոլոր շինութիւնները իրար հաւասար են և նման, ապա ու՞ր է եկեղեցին... Յանկարծ աչքերս կանգ առան հեռու, երկու, միմանց մօտ ցցուած և գիւղի հարաւ թեքուած սիւների վերայ, որոնց վերին ծայրերը միացնող տախտակից կախուած էր մի հատիկ փոքր զանգ: Եզրակացրի որ այդ տեղ է Աստուծոյ տաճարն ու մօտեցայ. Մօտեցայ ու տեսայ, որ խղճուկ հայ ժողովուրդը կարծես գոհ էր որ մի քանի այրուած ու մաշուած, մուրացիկ պատկերներ շարելով մի հասարակ երձիթի մէջ՝ անուանում էր նորան եկեղեցի:

—Որ մեր գիւղը կրակ տաս, ծուխ չի բարձրանալ, շորահու զի դալ ցուպին կրծքով յենուած, գլուխը կամաց պացնելով ասում էր ինձ մի ծերունի, հաց ընանիք ուտելու, ապրանք չունենք վարելու.

—Ճշմարիս է խօսում Մկօ քէհան, ինչ որ կայ, Ճշմարիս է, հաստատեց մի ուրիշ միջին տարիքեռվ տղամարդ թիակն ուսին՝ ծանրաբայլ մօտենամլով. Ապա այդ երկուսը իրար լրացնելով սկսեցին պատմել, որ Փալտրվանցիք Քիւրագդարեցիք Ռուսաց բանակին իբրև ամենամերձ բնակիչներ, անցեալ 1877 թուին կրել են մեծ ծանրութիւն և զրկանք Կարսի գէմ պատերագմող ուսւ բոլոր զօրքը Յուլիս ամսից երկար ժամանակով բանակ էր գրել հենց այդ գիւղերի մօտ. Գլխաւոր հրամանատառը դրամական գոհացում տալով երկու գիւղին, թոյլ է տուել ուտեցնել զօրքի հազարաւոր ձիանցը երկու գիւղերի հասկ բըռնած արտերը, խոտհարքները և արտօտաեղերը. Երբ ձեռքից գնացել են՝ յիշեալ դաշտերը, գիւղացիք մնացել են տների մէջ փակուած, առանց ապրուստի, առանց հացի և խիստ թանգութեան մէջ. Անասուններն էլ մնալով բաղցած մասամբ ծախուել են, մասամբ սատակել, Բնակիչները ցանկացել են առ ժամանակ տեղափոխել Ալէքսանդրապոլի գաւառի գիւղերը, բայց դորան արգելք է հանդիսացել այն արգարացի ահը, որ ոսւ զինուորները կարող էին իսկոյն և եթ քանդել անբնակ տները և նորանց փայտեղէն մթերքը վարել իւրեանց կարիքների համար:

Մնալով իւրեանց ծածկի տակ, բացի պատերազմի բազմատեսակ և անխուսափելի զրկողութիւնները, գիւղացիք ենթարկուել են և մի այլ ևս առաւել վսանդաւոր կարիքի. Փալդրգանի և Քիւրագդարացի գիւղական տներում զետեղուած էին

վարդցաւով (աիֆով) հիւանդ բազմաթիւ զինուորներ, որոնցից զիւղացիք ևս վարակուելով՝ մահին տուել են բազմաքանակ զօհներ.

Սոյն վիճակին ենթարկուել են, բայց թուրք զօրքի կողմաց և այլ մի բանի զիւղեր Ալաջայ լեռան արևելեան ստորոտում, ուր բանակ էր դրեւ զօրքը. Սոցա թուին պատկանում էին յունաբանակ Վիզինքէով և հայաբնակ Ծալայ. գիւղերը Վերջինը պտղաբեր և ամենահարուստ զիւղերից մինն է եղել, որ թուրքաց զօրքի գալու հենց առաջին օրից իսկ ենթարկուել է զինուորների ասպատակութեանը. Բայց որովհետև թուրքերի ասպատակութիւնը լինում է ոչ միայն ուստելիք, այլ և սիրոյ առարկայ ձեռք բերելու, ուստի տարաբազդ Ճալնցիք իւրեանց ընտանեկան պատիւը բարձր պահի լու նպաստակով, թողել են լայնատարած արտերը և աներն, ու մինչև վերջին մարդը փախել անցել էին Ալէքսանդրապոլի զիւղերը.

Հոկտեմբերի վերջին, երբ ոռուսաց յազմութեամբ Ալաջայի բարձրութիւնները մաքրում են թուրք զօրքերից, զանուղիք Ճալնցիք վերադառնալով իւրեանց զիւղը, տեսնում են որ տները բանդել են և շինութիւնների փայտեղէն մասը այրել են տաճիկ զօրքերը իւրեանց պէտքերի համար. Ապրիլի վերջին 1878 թուի Կարսում առաջնորդ վարդապետ Աղուանեանի մօտ հանդիպեցի Ճալայ գիւղի երբեմն հարուստներից մինին, որ աղեթարշ սրտով ալերսում էր առաջնորդ հօր միջնորդութիւնը, որ Ոռուսաց կառավարութիւնը բարեհաձեւ շնորհել ամբողջ գիւղին, փոխարինաբար, զոնէ սերմացու գարի և ցորեն.

Նախքան բազմաչարչար Փալցրվանին հրաժարական տալս, յիշատակեմ այս տեղ որ այս զիւղից դէպի արևելք ցրուած են հին Փալդրվանի աւերակները մի բանի մատուռների հետքերով. Ոչ ոք չղիտէ թէ երբ և ինչի՞ է տեղափոխուել գիւղը Տիգ նոր տեղը, միայն երեսում է որ այդ տեղափոխութիւնը մօտ հարիւր տարի պէտք է լինի, ըստ որում ներկայ գիւղի հին հանգստարանում հանդիպեցի միայն մի տապանաքարի վերայ մի արձանագրութիւն հայկական 1250 թուականից «Այս է տապան Հոռոմին, գրեցաւ թվին ՌՄՌ»: Գիւղից արևելք, երկու ձորակի միջև կայ աւերակ հին զիւղատեղի Միհատուն անունով, որի ծագումն ու անհետանալը ոչ ոք չգիտէր:

Քիւրագգարարա զիւղն իւր շրջակայքով շնորհիւ իւր առանձնակի գիրքի միշտ եղել է պատերազմների վառ հանդէս, երբ

ա եղի են ունեցել Ռուսների և թուրքերի ընդհարումները։ 1854 թուին ոռուսները կատարեցին այստեղ վառաչեղյաղութիւններին պատերազմները նոյնպէս կատարուեցին այստեղի Սորանից երեսւ է որ տեղաղբութիւնը մեծ յարմարութիւններ է ներկայացնում պատերազմ վարելու համար թէ ոռուսաց և թէ օսմանցոց կողմից։ Արդարեւ լայնանիստ և լայնածաւալ դաշտի վերայ սփռուած մեծ ու փոքր, ցած ու բարձր բլուրները մի կողմից ու Ալաջա լեռան բարձունքները միւս կողմից անգնահատելի դիրքեր են ստեղծել զօրաբանակ դնելու, ոմբակոծելու և մարդկային ցեղի աւելորդ անգամներին կարելոյն չափ շատ ոչնչացնելու...»

Դիւղի հարաւային կողմից անմիջապէս բարձրանում է Կարա-եալ կոչուած կանաչաւէտ բլուրը, որ ինչպէս նախկին ժամանակ, նոյնպէս և 1877 թուին կազմում էր ոռուսաց բառ նակատեղին։ Սորա մօս է միւս բլուրը Կարա-կուզի (սև գառ) անունով։ Ալերջին պատերազմի ժամանակ նորին Կայսերական Բարձրութեան Կովկասեան փոխարքայի վրանը դրած էր այս բլուրի սառուստում։ Այս և միւս հարեան բլուրների ու սարերի անունները բոլորին էլ յայտնի է, ով փոքր ի շատէ հետեւել է և թուականի պատերազմին։

Նրբ մեր փոստասպայլը սլանում էր դէպի Փարգիտ, մենք պարզ դիտում էինք այդ բլուրներն ու ընդարձակ դաշտավայրն, ուր մի քանի ամիս առաջ արեան ճապաղիքներ էին հոսում։ Կարա-եալից հարաւ բազում է ընդարձակ դաշտ, որից սկսում է աշխարհին յայտնի Ալաջա լեռնազօտին, արեւելքից արեւմուտ երկարաձիգ ուղղութեամբ նւր արևելեան ստորոտում թողնելով բազդազուրկ Անի քաղաքի մուսլ աւեռակները, լեռան աստիճանաբար բարձրանում է և իրոխտաբար նայելով Կարա-եալի վերայ, կազմում է մի քանի սրածայր կանաչագյուղ գագաթներ, որը են Հւլիս, մեծ Նանի և փոքր Ծանի, սորա առաջ ունենալով Կաքաղ-Ծափայ փոքր բլուրը։

Կարա-եալը, Կարաղ-Ծափան ոռուսաց կողմից, իսկ Ալաջան, Էլիան, մեծ և փոքր Խաչները թուրքերի կողմից այդ միջոցին դրականաբար ծածկուած էին զանազան ուղղութեամբ փորուածներով, պատսպարտներով, պատնէշներով ու ամեն տեսակ հողէ շինութիւններով, որոնք որ և է կերպով կարող էին նպաստաւոր լինել կռուի յաջողութեանը։ Իսկ նորանց ստո-

ըրոտներն և դորանցից ձգուող դաշտերի ընդարձակութեան վերայ սփոռուած էին մարդկանց ու անասունների ոսկրներ, զինուորների ցնցոտիք, ծակծկուած կօշիկներ, պատառոտի զըրիարկներ, թղթի, ածուիթի, տախտակի կտորներ, ճայթած ոռութի բեկորներ, պղնձեայ փամփուշտներ և այլ հազարաւոր տեսակ տեսակ անպէտք իրեղէններ, որոնք մնացել էին զօրաբանակից:

Հասկանալի է ուրեմն որ յիշեալ դաշտավայրը մօտ չորս ամիս ողողուել է հազարաւոր մարդկանց արիւնով. Այդ սոսկալի բլուրներն անընդհատ չըրս ամիս հաղորդել են միմեանց հազարաւոր զիրաւորուածների լաց ու կոծի արձագանքը. Չորս ամիս շարունակ և անդադար, գիշեր ու ցերեկ հիւսիսից հարաւ՝ հարաւից հիւսիս ահաելի ոռոմբերը ճեղքում էին օդը ու պատառուում բլուրների լանջերը. Թնդանօթների Խլացուցիչ որոտումները դդրդեցնում էին սարեր ու ձորեր ու վառոդի ծխով ու հոտով լցնում մթնոլորդը:

Պատերազմի դաշտը սայլակից դիտելու ժամանակ սուրհանդակ արտադրուած աշբերը լայնացնելով, բարկացած դէմքով արտասանեց.

— Ար' ժեն միթէ արմեաշկանները որ նորանց պատճառով բիւրաւոր ոռուսների արիւն է թափուել այս տեղ և միլիոններ ծախտուել...

— Մի՛թէ հայերի համար է սկսուել այս պատերազմը, ընդհատեցի ես:

— Հապա ում համար է, չէ որ Թիւրքիայի քրիստոնեանների ազատութեան համար է, արմեաշկաններն էլ իրև թէ քրիստոնեաններ են, Ալեքսանդրապոլից մինչեւ այս տեղ ոչ մի եկեղեցի չտեսայ, հէգնօրէն պատասխանեց բժիշկը ու շարունակեց դժգոհնութիւններ յայտնել կառավարութեան դէմոր Թղթահայերի ազատութեան համար պատերազմ է սկսել և գուցէ իւր ծրագիրը փաթաթէր կառավարութիւնն զգին, եթէ մի զինուորական, որ սայլակով գալիս էր Կարսի կողմից, իւր յանկարծակի յայտնուելովը չընդհատէր նորա ծակ փիլիսոփայական մտածմունքները նկատելով սպային՝ բժիշկը հեռուից հարց տուեց նորան.

— Ասացէք՝ ինդրեմ Կարսից՝ էք դալիս.

— Այո, պատասխանեց սպան.

— Ուրեմն դուք կիմանաք, գեներալ Հէյմ... գիտէք

որա համար իմիչքեղէն եմ... կցկտուր արտասանեց բժիշկը՝  
և կամաց հայհայց սպային, որ հեռուից և արագ անցնելով,  
լաւ չլսեց նորա խօսքերը և թողեց անպատճախան:

Հասանք վերջապէս Խալիֆողլի գիւղը, որ աւերակ  
դրութեամբ դրած էր փոքր Խաչի ըլուրի Տեւիսային ստորո-  
տում և որի թուրը բնակիչները փափել էին ամէն կողմի վե-  
րայ. Այս տեղ էր փոստի չորրորդ կայսրանը. Գիւղի ցածր,  
խոնաւ, անձոռնի տնակների մէջ բնակում էին մի քանի ոռու  
զինուրներ. Սոքա իւրեանց խմելու ջուրը վերցնում էին  
հալուղ ձիւնից դշյացած լճակից, որովհետեւ բնական աղբիւր  
չկար, իսկ գիւղացիք էլ գործ էին ածում հորերի ջուր, որոնց  
բերանները՝ նախըան իւրեանց փախուսաը վարպետութեամբ-  
պյնպէս ծածկել թագցրել էին, որ ոռուները աշխատում էին  
գտնել, բայց չէին գտնում:

Խալիֆօղուց հիւսիս Կարսուայ գետի աջ ափում Փարզիտ-  
անունով հայ աւերակների վերայ բնակութիւն էին հաստատել  
թուրքերը. Կոմս Պասկեիչի օրով նորա հայ բնակիչները գաղ-  
թել են և կազմում են. այժմ Ալեքսանդրապոլի գաւառի  
Զրաղլու գիւղը. Նոքա թողել են Փարզիտում երեք քարաշէն  
կամարակապ աղբիւր, որոնք անչոդ ու անշնորհ թուրք տարրի  
ձեռքում կամաց կամաց քայլայսւելու վերայ էին.

Փարզիտու հիւսիսային կողմում կար մի հյակապ եկեղեցու  
աւերակ սրբատաշ բարից, լայնանիստ և բազմախորան, պյնպէս  
որ տեսնողը կարող էր ընդունել ամրոցի տեղ, մանաւանդ.  
որ նա ունէր տարօրինակ ձեւ, այն է փւրաքանչիւր անկիւնը-  
կազմուած էր կիսաբոլոր կամարածածկ աշտարակից, մէջը  
լայն խորան. Անունն է Ամենափիրկիչ և հարաւային պատի մէջ՝  
արտաքուստ եղել է արձանագրութիւն, վերջերումս անհետա-  
ցած թուրքերի ձեռքում Պատերազմից միքանի տարի անցած,  
այդ տեղերում բնակեցրած էին ոռու գաղթականներ:

Պէտք է նկատել որ ԽVI դարում յայտնուող քիւրդ-  
հրոսակ, հերոս և բանաստեղծ Քեօրօղլին ունի այս կողմերում  
գեռ ևս ժողովրդականութիւն ազգաբնակութեան վառ երեակա-  
յութեան մէջ. Ժողովուրդն աւանդութեամբ Քեօրօղյուն է վերա-  
գրում երկու Խաչի ըլուրների անուան ծագումն և այն հողէ-  
տնակը, որ փոքր Խաչնու արևելեան լանջումն է. Քեօրօղլին,  
ըստ աւանդութեան, բնակում էր այդ տնակում և նորա կե-  
րակուրը, որ եահնի, այսինքն խաշած միս էր, պատրաստում:

էր մեծ Խաչնու վերայ ու բերւում էր փոփո Խաչնի. Ուրեմն բլղբների անունը ծագում է Խաչնի մսից.

Մինչ այս՝ մինչ այն՝ սայլակը շծած մօտեցրին մեզ և մենք նորից շարունակեցինք ճանապարհը դէպի Կարս և պէտք է Հանսէլնիք ուղղակի Կարս, որ հեռու էր մեղանից մօտ 18 վերստ. Այդ տարածութեան վերայ, ճանապարհին պայլ ևս չտեսանք բնակութիւն, դաշտն, իրբեւ վարելահող պատկանում էր Կարսի Շողագործ. ժողովրդին որ երկու տարի, պտտերազմի պատճառի չեր վարւում նորա վրայի ճիւնն Ապրիլին հաղիւ հալուել էր, իսկ Յունիսին, վերադարձիս ժամանակ, Ներկայանում էր մի հիասքանչ աեստրան, բամու հետ լողում ճաճում էին իհատ առ իհատ բուսած երկայն, կանաչ խոտերն և նորանց մեջ լիինծը—*euphorbia*, դեղնածաղիկը—*euphorbia Cyparissias*, զայխօնը կամ ֆլորընդակը—*Verbascum thapsiforme*, թիսածաղիկը—*Origanum Vulgare*, կումկոտրէը—*Adonis aestivalis*. մեղրածըռուկը—*pulmonaria officinalis*. հօշոշը—*Matricaria chamomilla*. ինկածաղիկը—*hypericum perforatum*. բարդ-վենիկը—*Achillea millefolium*. տուպը—*papaver rhoeas* շուշանը—*Conium*. կառը—*Corduus crispus* և այլ շատ դաշտային ծաղիններ միմեանց փաթթուած, տալիս էին այդ լայնածաւալ տարածութեանը բազմատեսակ գցներ.

Մեր ուր դրած ծաղկափթիթ դաշտի. արևմտեան ծայրում, մեղանից գեռ ևս շատ հեռու, աստիճանաբար բարձրանող մերկ և իճածածկ բլուրների գագաթների վերայ հսկայաբար կանգնած են աշաելի և արիւնաբրու մարտկոցները. Կարս քաղաքն իւր Խճճուած շինութիւններով մզկիթների այս և այն տեղ զցուած, բարձր, սրածայր մինարէթներով հեռուից երևում էր մարտկոցների ստորոտում դրած.

Երեկոյեան դէմ էր, Ապրիլի 13-ին, 6 հազար ֆուտ ժողովակերեւութից բարձրութեան վերայ, որ մենք գեռ ևս ճանապարհում, անմարդաբնակ դաշտի մեջ զգում էինք իհսութուրա, մանաւանդ երբ քամախառն անձրեւ մաղել սկսեց եւրեսներին վերայ. Ընկերս ցրտից մերթ սեղմաւում էր, մերթ ալքերը բևեռում Հեյմանի արկղի վերայ. Ես զգում էի թէ ի՞նչ մտքեր են անցնում նորա գլխովը. նորից մենք նկատեցինք որ դէպի մեղ սրընթաց գալիս էր սայլակում նստած մի անծանօթ զինուորական. Ընկերս պատրաստուեց նորան հարդեր տալու նոյն հիւանդ Հեյմանի մասին:

— Գեներալ Հեյմանի մասին է ձեր հարցը, պատասխանեց զինուորականը հանդարտեցնելով. ձիանց բայլերը. Գեներալը Զեղ բարեկամ կամ ազգական է:

— Աը... ոչ... բայց ես սուրհանդակ եմ ու ունիմ շատ կարևոր յանձնարարութիւն, պատասխանեց բժիշկը, թագոնելով իւր բժիշկ լինելը.

Զինուորականը աչքերով զննեց ինձ, մեր ծանր բեռը, մաֆրաշը և պյլն, տեսաւ որ սուրհանդակը թեթև կլինի ու միայնակ, տեսաւ որ սուրհանդակի շնորհ չկայ ոչ ընկերում և ոչ ինձանում, վերջապէս պատերազմի ժամանակ սուրհանդակը զինուորական կլինի և ոչ մեղ պէս բաղաքացիական, պյնուամենայնիւ աւելացրեց.

— Ձեր կարեւոր յանձնարարութիւնը, կարող էք տալ գեներալ Լազարեին:

— Խոչի՛, զարմացմամբ հարցրեց ընկերս:

— Որովհետեւ նորա մաշից յետոյ հրամանատարութեան իրաւունքն անցաւ գեներալ Լազարեին, պատասխանեց զինուորականը:

— Խոչպէս... մի՛թէ մեռաւ գեներալ Հեյմանը.

— Այո՛, պյո՛, մեռաւ... վերջին անգամ պատասխանեց զինուորականը և հեռացաւ:

— «Երկնային թագաւորութիւնը լինի նորան» (պարօտո պեծօհու), հանդարտութեամբ արտասանեց ընկերս և կոացաւ Հեյմանի արկդի վերայ. Նա մի կերպ վերցրեց արկդի երեսի մի անկիւնը և հանեց առաջին ձեռքն ընկած շիշը, բացեց իւրցանը և բաժակի չկինելու պատճառով ուղղակի ցցեց բերանում. Կլազանելով խմեց շշի կէսը. Դա շատօ լավիտ էր. Հիւրաժիրեց և ինձ. Երբ սուրհանդակիս կատարը տաքացաւ, սկսեց արդէն աջ ու ձախ ցրել իւր հայհոյանքը նախ անծանօթ զինուորականին որ իսորհուրդ էր տալի վարեւոր յանձնարարութիւնը տալ Լազարեին. «Ա՛, յիմար մարդ, խօսում էր սուրհանդակ բժիշկը, ինձ խորհուրդ էր տալի, որ արկդը յանձնեմ Լազարեին, տօ, գետինն անցնեն. Հեյմանն էլ Լազարեն էլ, միւսներն էլ... մի՛թէ ես չեմ կարող անուշ անել... ասաց և նորից բաշեց բերնին շատօ լավիտի մաղորդը».

Վերջապէս մտանք բաղաք, դիմեցինը ում՝ հարկն է, ցոյց տալով մեր վաւերաթղթերը. Միջնարերդի ստորոտի աներից մինի մէջ զինուորական իշխանութիւնը յատկացրեց երկուսիս

մի սենեկ, ուր և հանգստացանք: Երեկոյեան մի շի? ևս բացուեց Հէյմանի կենացը: Հետևեալ օրը ներկայադանք զլխաւոր բժշկին կարգադրութիւն ստանալու Երկու օրից յետոյ բժիշկ ուղեկիցս գնաց Հասանկալէ, որին այլ ևս երրէք չհանդիպեցի:

## Գ.

Կարսէ աեղագրութեան ամըութիւնը: Թօքական մարտկոցները. հանգստացանները, փողցները. աները, խօսկցութիւնք: Կարսէ գետը ու վլւջնես կամուցները:

Շատ բնական է, որ անծանօթ ճանապարհորդն առաջին անգամ մօտենալով Կարս բաղաքին, իւր րորոր ուշաղրութիւնը դարձնում է պատմական մարտկոցների վերայ, որոնք իւրեանց բարձր դիրքով, ահաելի դէմքով բերանները դէպի ձեզ ուղղած շարեշար թնդանօթներով նայում են բոլոր կողմերի վերայ: Եթէ եկաւորը փաքք ի շատէ ծանօթ է Կարսի պատերազմական պատմութեանը, նա ակամայ կորչում է մարտկոցների հետ կապուած պատմական յիշողութիւնների մջ: Ըստ որում եթէ Կարսը իւր անյայտ ու անյիշելի ժամանակներում հիմուելուց մինչև մեր օրերը միշտ և հանապաղ եղել է և լինելու է պատերազմական հանդէս, նա դորանով պարտական է իւր յարմար դիրքին: Նորա անյայտ հիմագիրն պյնքան հեռատես և բաղդաւոր հայեացք է ունեցել այդ տեղագրութեան վերայ, որ Կարսը ոչ միայն նետ ու աղեղի շրջանում, այլ և վերջին դարերի հանձարի սաեղծած աշխարհակործան թնդանօթների շրջանում կարող է համարուել իրեւ ամենահիմնաւոր և դժուամաշէլի ամրութիւններից մինը:

Արդարեւ, նետ ու աղեղի շրջանի մէջ ընտրած բազմաթիւ քաղաքների և ամրոցների սեղագրութիւնը մեր ժամանակներում ամենեին համապատասխան չէ այժմեան պատերազմական կառարելագործութեանց, այն ինչ Կարսն այդ տեսակ սեղերի շարքում կազմում է մի օրոշ բացառութիւն: Նետ ու աղեղով զինուած զինուորների համար ինչ չափով իւր ժամանակին անձատչելի է եղել մեր օրերին հասած միջնաբերդը, նշյն չափսկ էլ անձատչելի են Կրուպպի թնդանօթների առաջ բաղաքը շրջապատող մարտկոցներով պատկուած բարձր բլուրները:

Ուրեմն՝ հսագարեան Կարսը ոչ միայն չէ կորցրել իւր

Նշանակութիւնն, այլ և աւելի է բարձրացել և գուցէ հէնց իւր դիրքին է պարտական՝ որ պարբան դարեր մնացել է շէն իւր արդէն աւելրակ դարձած, մինչև անդամ բոլորովին անհետացած ընկերների մէջ:

Թուրքերի տիրապետութեան օրով բաղաբը շրջապատուած էր 12 ամբապինդ մարտկոցներով, որոնք էին Կարս զետի աջ կողմում 1) Արաբ թարիա կամ Կարաբաթլաղ, 2) Կարա-դաղ, 3) Հաֆիս փաշայ, 4) Կանլի ու 5) Սուարի, իսկ ձախ կողմում 6) Զիմթարիա 7) Վաշի-փաշայ 8) Ինգլիզ թարիա, 9) Մուկսիի, 10) Զախմախ, 11) Դիք թափասի և 12) Թօմահմազ. Ռուսների ձեռքում, ինչ կասկած, սորա ևս առաւել՝ ամրացան ու, յայտնի բան է, անունները փոխուեցին:

Քաղաքի մէջ պատուելով՝ ձեր աչքին զարնում էին հէնդ ուղղակի բաղաբի մէջ սփուրած մահմեդական հանգստարաններ իւրեանց նեղ, տափակ, կանգուն տապանաքարերով Մէջիդ չկար որ շըշապատուած չլինէր լսյն հանդստարանով. Շատ տեղ հեղեղից լճակներ կային գերեզմանատներում, Բնական է, որ ոռւսաց նորամոյծ կառավարութիւնը հէնց սկզբից իսկ ուշադրութիւն դարձնէր բաղաքի առողջապահական մասի վերայ և ինչ բան մինչեւ այդ ժամանակ եղել էր բնական իսլամականների տեսակէտից, այդ կիինէր անբնական ուրիշների համար:

Արդարեւ կառավարութիւնն արգելել էր մահմեդականներին թաղել հանգուցեալներին բաղաքի կամ մէջիդների հանգստարանում և այդ նպատակի համար, բաղաքի արկելեան կողմում, Հաֆիս-փաշայ և Կանլի մարտկոցների արանքում, լսյն ու հարթ դաշտի վերայ բացուած էին միմեանց կից երկու ընդարձակ հանգստարաններ, իրամներով շրջապատուած, մինը բարձր ձօղի վերայ խաշանշանով՝ օրթոդօքս հանգուցեալների համար, միւսը կիսալուսնի նշանով՝ մահմեդական հանգուցեալների համար. Այս երեսոյթն ապացոյց էր, որ բաղաքի միջի հանգստարանները կլերցանան, կհարթուին և գուցէ դառնան ծառուղիներ.

Կարսի փողոցները նեղ, ոլոր մոլոր ու անկանոն էին. Նորա երբեմ թէ սալած էին, բայց ամենակոպիտ մեծամեծ բարերով, այնպէս որ սայլի անիւներն ընկնում էին երբեմ բարձր բարի վերայ, երբեմ փոսերի մէջ. Նորամոյծ կառավա-

րութեան շնորհիւ լապտերները լուսաւորում էին շատ փողոցներ, մի երկոյթ որ Կարսը երբէք տեսած չէ իւր հիմաըկութեան օրից և եթէ 984—989 փրկչական թուականին Կարսում թագաւորող Մուշեղեան Աքասը լապտերներով լուսաւորէր իւր մայրաքաղաքի փողոցները, այն ժամանակ, անշուշտ, աւելի հեշտութեամբ կարող էր որսալ զիշերաշրջիկ կողոպտող և աւաղակ մարդկանց, որոնց աշից կարելի էր լինում անց-նել բալարի փողոցներում (Ասողիկ)։

Կարսի տները բարաշէն էին ու մեծ մասը կրով սպիտակացրած, խառն և միմեանց կից, և մեծամասնութիւնն առանց բազի Փողոցի լոյսն ստանում էին փոքր ի շատէ կանոնաւոր լուսամուտներից, իսկ միւսները՝ երդիկում բացած թղթածածկ լուսամուտներից։ Պատշգամբ շատ սակաւ էր նկատում, այն էլ երկյարկանի տներում, որ նոյնպէս սակաւաթիւ էին։ Շատ անգամ մինի տան բագը լինում էր միւսի տան տանիքը և տների միմեանց կից լինելու պատճառով կարելի էր բազմաթիւ միապաղազ տների տանիքներով ման զար։ Կանոնաւոր արտաքնոցներ չունենալու պատճառով՝ այդ տանիքներն էին ծառայում բնակիչներին։

—Զէ՛ կարելի արդեօք տեսնել ձեր տների ներսը, դիմեցի ուղեկից տեղացի Մարտիրոսին և Օսմանին։

—Խոչի չէ, ինչի չէ, էֆէնդըմ։ պատասխանեց Օսմանը, համեցէք, միայն ներէք, եթէ մեր տների ներսը ձեր կողմերի տների նման չէ։ Ձեր երկիրը Ռուսի երկիր է, կարծեմ աւելի բարեկարգ կլինին այն տեղ ձեր տները։ բայց ինչ եմ առում, էֆէնդմ, ես մի անգամ եղել եմ Գիւմրի... ասաց Օսմանը և հրաւիրեց իւր մի բարեկամի տունը։

Մենք անցանք մի շաա նեղ, կեղսոտ և կարճ փողոց և փայտէ աստիճանով (Նարդիւանով) բարձրացանք դրացու տան տանիքը և ապա մի փոքրիկ տան դրան առաջ կանգնեցինք։ Օսմանը կամաց զարկեց դուռը, որից շուտով դուրս եկաւ տան տէրը, միջին հասակով, կարճ խուզած մորուքով, կարմիր ֆասը գլխին մի թուրք և Օսմանին ու Մարտիրոսին տեսնելով վրատահ ընդունեց մեզ, հրաւիրեց նստելու, ինքն էլ նստելով։

Մենք նստեցինք յատակի մի թզաչափ բոլորի շուրջ բարձրութեան վերայ թիկունքներս դնելով պատերին դէմ դրած կոշտ բարձերի վերայ, իսկ ոտներս ձգելով գրդերով ծածկուած յատակի վրայ, որ իւր եղբներից մի թզաչափ ցածր էր, Առաս-

առալի օղակից կախած էր փոքրիկ ջահ։ Պատերի երեսին ներկով նկարած էին կանթեղներ, ծաղիկ, բյուսեր և թռչնիկներ։ Պատերից մինի մեջ շինած էր բանդակած տախտակից սո, որ գմբէթաւոր մի խորշ, ուր բաղմեցրած էին օձառոր նարդիլէն, ապակէ ջրամանը և սուրճի պարագաները։ Անկիւններում, յատակից մինչև առաստաղ բարձրանում էր նոյն բանդակագործ տախտակներից մի սիւն, որ ներկայացնում էր միմեանց վերայ դասաւորուած փոքրիկ պահարանների մի շարք՝ սապոն, աշբի գեղ և այլ պահապարդերի իրեղէններ պահելու խայտաձամուկ տիկինների համար։ Հմուտանանք յիշել որ իւրաքանչիւր մենեակում պատի մեջ կայ մի մի վառարան (բուժարի), թէև երկաթէ հնոցներն էլ շատ տարածուած են կարսի մեջ։

— Էֆէնգին շնորհ է բերել Ռուսի երկրից, նշանացի անելով ինձ, դիմեց սան տիրոջը Օսմանը, ծառայող է, այսօր ծանօթացանք մեր Մարդուիս էֆէնդու շնորհիւ, ինքը զիտուն մարդ է, ամեն բան ուզում է իմանալ։ Այս խօսքերի վերայ, որին համաձայնութեան նշաններ տուաւ և Մարտիրոսը, տան տէրը գոհութեան ցոյց արաւ, աջ ձեռքն արագ մօտեցնելով ծնոտին և ճակատին ու ասաց։

— Բարով! Հաղար բարի էր եկել, ոնդ էր, առողջ էր, էս, էֆէնդմ, հաւանում էր մեր բաղաքը, կարելի է չհաւանէր, ու բովհետև շատ բան բանդուել է, աւերուել է պատերազմի ժամանակ, եթէ տեսնէիր, էֆէնդմ, պատերազմից առաջ, օ օ, հրաշալի բաղաք էր. բայց այժմ..

— Օ օ, այժմ շատ փոխուել է, վրայ բերաւ Օսմանը, Ռուսի ասկեարը շատ բանդեց, վեաս տուեց, կողոպտեց...

— Այո, ձշմարիտ է, ոսւսի սալդաթը սրանց շատ վեաս հասցրեց բաղաքը յարձակմամբ առնելուց իւտոյ, հաստատեց Մարտիրոսը.

— Էֆէնդմ, Ալաջայի կոտրուելուց յետոյ երբ ուսւն երկորդ անգամ պաշարեց մեր բաղաքը, շարունակեց Օսմանը, այդ միջոցին ամեն 15—20 րոպէից յետոյ հարաւային կողմից գիշեր և յերեկ գալիս էր թնդանօմի ոումբ և պայթում էր բաղաքի զանազան կէտերում։ Հանգստութիւն և դադար չունէինք, ահ ու դողից չղիտէինք ուր գնանք։ Քանի պաշարումը սաստկանում էր, այնքան էլ ուրմրների երևալը յաճախան նում էր։

— Ոչ ոք չգիտէր թէ մի բանի րոպէից յետոյ ինքը կեն-

դանի կմայ թէ չէ, հաստատեց Մարսիրոսը, հայոց եկեղեցու մօտից, որ միջնարերդի լանջումն է, ու շատ բարձր գերբովշ լաւ կարելի էր դիտել ամբողջ հարաւային դաշտը. Հայերից շատերն այնտեղ դիտակով նայում էին դէպի հարաւ և հէնց որ դաշտի բարձրութեան վրայ ծուփի կծիկներ էին երեսում, իսկոյն ամուր՝ տեղ թագնւում էինք, իմանալով որ ոռումբն արդէն դալիս է քաղաք և ականջներս սրբելով լսում էինք թէ որ տեղ է պայմելու, որից յետոյ նորից 15—20 րոպէ ապահով էինք մեզ համարում. Բայց մի անդամ սարսափը մեղ տիրեց, երբ ուսմբն ընկաւ մեր եկեղեցու վրայ և քանդելով նորա տանիքն՝ ընկաւ ներս.

Այս խօսակցութեան ժամանակ տան տէրը հիւրասիրեց մեզ սուրճով:

—Եֆէնդմ, նորից շարունակեց Օսմանը դիմելով ինձ, ցեղեկով մի կերպ պատրաստում էինք երեխանցով, կանանցով տների խորքերում, ներքնատներում և այլ ամուր տեղերում, իսկ զիշերով զգիտէինք, ուր գնանք, Մեզանում շատ կանայք, տունը տղամարդկանց թողնելով գողերից և աւազակներից պահելու, իւրեանց երեխաների հետ հանգստարաններում գերեղմանաքարերի յետևն էին պատսպարում, մանաւանդ հայոց հանգստարաններում, ուր հինաւուց գերեզմանաքարերը խոր և լայն են.

—Ճատերը թուրքերից, վրայ բերաւ Մարտիրոսը, ապաւ մինում էին հայոց թաղերում, նախ՝ որ այդ թաղերը միջնարերդի ժայռի ապահով լանջումն են, երկրորդ՝ սոքա հաւատում՝ էին որ ոսւսները հայոց թաղերի վրայ ոռումք չէին ձգիլ բայց այդ կարծիքը սխալ էր, հայոց թաղերն էլ ապատ չմասնակի միայն թուրքի թաղերն որ աւելի տափարակումն են և ուսմբին մատչելի, աւելի ենթարկուեցին վնասների:

—Նյոյ պաշարում ասուած զործողութիւնն անտանելի բան է, յարակցեց տան տէրը զօրքերի իրաբանցումը, հրացանների և թնդանօմների ճայթիւններն ու գոռոցները պաշարողի և պաշարուածի կողմից, զօրաբաժինների յաջող կամ անյաջող ընդհարումներն և մանաւանդ անդադոր պտտուղ ճշմարիտ և սուստ սարսափները բնակիչների հոգին տանջում՝ մաշում էին. Շուկայ էինք գնում, տեսնում էինք խանութները, կողպ, մարդիկ յուսահատ, խումբ խումբ կանգնած հաղորդում են միենանց սարսափահար լուրեր և ահա այդ սոսկալի բոպէին

մահառիթ ոռւմբն օդ ճեղքելով՝ անցնում է և դէմի տունը  
քանդելով հրդեհում է:

— Ուղիղ է ասում Մանսուր Էֆէնդին, այսպէս էր տան-  
տիրոջ անունը, ընդհատեց Օսմանը, մի քանի տներ հրդեհի են-  
թարկուեցին և հրդեհի առաջն առնելու բնակիչներից ոչ ոք  
չէր վստահանում օգնութեան հասնել, ըստ որում հրդեհի ժա-  
մանակ ոռւսները, կարծես դիտմամբ, ոռումբներն պյտ կէտի  
վերայ էին ուղղում, երեխ որպէս զի կրակը չհանգչի և աւելի  
տարածուի:

— Առաւել շատ վախենում էիր զիշերային յարձակումից,  
ասաց Մանսուրը: Յարձակումի ժամանակ սպանութիւն ու կո-  
ղողուտն անխօսափելի էին: Զհաշուելով ասկեարը, սորանցից  
աւելի վստանգաւոր էին թուրք թարաքեամա, քիւրդ և հայ  
ձիաւորներն, որ միլիցիա էր ասում դուք, նորանք մեր բա-  
շիրողուկների նման գաղաններ են, որ գալիս են պատերազմի  
դաշտ աւելի կողոպտելու և սպանելու անմեղներին, քան թէ  
կանոնաւոր զործ կատարելու Պատերազմի խառն մի-  
ջոցին: Նորանք ոչ մահմեղական են հարցնում և ոչ քրիստո-  
նեայ: Ճշմարիտ է, մենք մասամբ յշխներս դրել էինք մեր հա-  
մարադարացի հայերի կողմից մեզ պաշտպանելու վերայ: Բայց  
միլիցիան ի՞նչ է հասկանում:

— Այս, այս, նախ քան պաշարումն, աւելացրեց Մարտի-  
րոսը, հայ և թուրք ընակիչներս խօսք էինք տուել իրար, որ  
մենք հայերս սորանց պաշտպաններ ուումներից, իսկ սորա մեզ  
պահպանն բաշիրողուկներից: Բայց փորձով տեսանք որ անի-  
րաւ միլիցիան չէր ջոկում և հաւասարապէս կողոպտում էր թէ  
հային, թէ թուրքին, թէ յշխնին և այլն, Մինչեւ ան-  
ծանօթ հայեր և թուրքեր, խառնուած միլիցիայի հետ, աշխա-  
տում էին կողոպտել...

— Էֆէնդմ, ինչպէս ես կարծում, Կարսը ոռւսին կմնայ  
թէ սուլթանին, յանկարծ խօսքը փոխեց դիմելով ինձ Օսմանը:

— Հատ դժուար է դորան ճիշտ պատախանել, դեռ պա-  
տերազմը չէ վերջացել, ով գիտէ, ի՞նչ պայմաններ կունենայ  
դաշնադրութիւնը, պատախանեցի ետ:

— Դուք քաջ գիտէք, Էֆէնդմ, որ ոռւսը մի քանի անգամ  
վերցրել է Կարսը և միշտ յետ է տուել փաղիշահին, պէտք է  
որ այս անգամն էլ յետ տայ, եղրակացրեց Օսմանը:

— Գուցէ ձեր ենթադրութիւնն ուղիղ է, նկատեցի ես,

բայց եթէ Կարսը կրկին փադիշահին յանձնուի, ապա ի՞նչի ոռւսը Թարիաները խճուղիով միացնում է իրար հետ, որ առաջ չէ եղել, ի՞նչի վաստած Թարիաները կարգի է քերում, ի՞նչի պէսը է աշադին ծախսեր անի և վերջը յետ տայ բաղաբը փա- դիշահին.

— Մաշալահ, Էֆէնդմ, ձեր դիտողութիւնները ճիշտ են, ես պյդքան չէի մտածել, խորհրդաւոր կերպով պատասխանեց Օսմանը և աչբերը ցած թերեց ու մի բոպէ յետոյ նորից բարձ- րացրեց գլուխն ու շարունակեց:

— Եթէ պյդպէս է, ասաց նա, մենք Թուրքերս չենք մաւ- Կարսում, կձգենք մեր կարուածքը և մեծամասնութեամբ կըո- չենք Օսմանի հողը, մենք չենք կարող վարուել ոռւսի հետ, չէ, չենք կարող վարուել...

— Ինչի չէր կարող վարուել ոռւսի հետ, ոռւսը վաս չե- տալ ձեղ...

— Մենք էլ զիտենք որ վաս չի տալ, բայց առաւելու- թիւն էլ չի տալ... երբ տիրապետութիւնը մերն է, պյն ժամա- նակ մեր գլուխն էլ բարձր է, հայն էլ է խոնարհում, յշյնն էլ ամենքն էլ, ինքս էլ վստահ գնում եմ թէյի մօտ կամ փա- շայի ու միւշիւրի առաջ, կանխաւ գիտենալով որ ինձ նորա մօտ տեղ կրինի: Բայց ոռւսի օրով ես ի՞նչ եմ, ուր կարող եմ գնալ, ո՞վ ինձ մարդու տեղ կդնի, յուսահատ կերպով պատասխանեց Օսմանը.

Նազա ես ինդրեցի որ ցոյց տան ինձ բաղաբի միւս մա- սերը. Մեզ ընկերացաւ Մանսուրը և մենք գուրս եկանք: Գնում էինք փողոցներով և զննում էինք բաղաբը: Այդ միջցին զըլ- իաւոյ փողոցով տանում էին դէպի հանգստարան մի հայ հան- գուցեալ քահանաներով, իսաչ ու խաչվառվ և եկեղեցական երգեցողութեամբ: Հանդիսին մասնակցում էին գլխարաց հայե- րի բազմութիւն: Ճանապարհին հանդիպող քրիստոնեաները վերցնում էին գլխարկները, իսկ տաճիկները զայրացած նայում էին, ըստ որում ոռւսաց տիրապետութիւնից առաջ բրիստո- նեաներն իրաւունք չունեին հրապարակական եկեղեցական հան- դէսներ կատարել որի ժամանակ նորանք կենթարկուէին ծաղր ու ծանակի թուրքերի կողմից:

— Եթշում էք, Էֆէնդմ, մի ժամ առաջ ասածս, ասաց Օս- մանը. աշա ձեզ կենդանի օրինակ. Դեռ մի բանի ամիս է միայն, որ ոռւսները ոտք են դրել այստեղ, կարսաբնակ խաչիարագ-

Ներն (բրիստոնեաները) արդէն մոռացել են իրենց անցեալը... Ո՞վ էր տեսել որ հանգուցեալին քահանայով ու երգով տանեն հանգստարան, Ռուսից առաջ այդպիսի բան չկար. հանգուցեալին կտանէին լուռ, ինչպէս հանգուցեալն ինքը լուռ է... եթէ այս տեղ խաչփարազները մուսուլմանների հետ հաւասար լինին, նորանց պէս ծէսեր կատարեն հրապարակում, չէ՛ որ դորանով Խոլամն ոտուց տակ կկորչի...

Մի փոքր և յառաջ գնացինք և Օսմանը կանգնեց մի առան առաջ և ցցյց տալով ինձ որ իւր տունն է, հրաւիրեց բոռ լրիս ներս: Սենեակը նոյն ձեմ էր, ինչպէս տեսանք Մանսուրի մօտ, սակայն լուսամուտների շրջանակների մէջ և տախտակաշէն առաստաղի վերայ երեսում էին բազմաթիւ ճեղքուածներ և ծակեր: Երբ նստած յատակի վերայ աչքերս դէպի վեր զննում էի առաստաղն, Օսմանը զայրացած ասաց.

—Եֆէնդ, գիտէ՛ք այս հնչնշաններ են առաստաղի վերայ և պատուհանների մէջ, այս հրացանի գնդակների հետքեր են... փողոցների վրայի բոլոր աներում կարելի է տեսնել այս բանը. այս չարիքը ոռւսի ասկեարն է բերել մեր գլխին յարձակման ժամանակ, նորանք երբ առան քաղաքը, փողոցներից գնդակներ էին ուղարկում դէպի վեր պատուհանների միջից դէպի ներս սենեակները:

—Երսի դուք էլ ձեր կողմից ընդդիմութիւն էք ցցյց տուել ասկեարին, ուրիշ կերպ նորանք խաղաղ ժողովրդի վերայ գնդակներ չէին արձակի:

—Միթէ այդ ընդդիմութիւն է, եթէ մենք չթողնէինք թշնամուն իլել մեր տունը, մեր տեղը, մեր քաղաքը, ապա էլ ո՞ր օրի համար պէտք է գործ դնէինք այն հրացանները, որ մեր փաշանները բաժանել էին մեզ: Ենք կարծիքով ուրեմն մենք պէտք է ձեռքներս ծալէինք և նայէինք թէ ինչպէս մեր թշնամին մտել է մեր տունը, մեր քաղաքը: Մենք էլ որ տեսանք ոռւսի ասկեարին մեր փողոցներում, իսկայն սկսեցինք վերևիդ ներք տների ներսից գնդակներ ուղարկել նորանց վերայ. մենք նորանց սպանում էինք, իսկ նորանք միայն առաստաղներն էին ծակոտում, պատերի յետեւը թագնում էինք.

—Ելի լաւ է որ թեթև էք ազատուել դորա փոխարէն պատիմներ չէր կրել նկատեցի ես:

—Ի՞նչպէս չենք կրել, շարունակեց Օսմանը, իրաւունք տուին ասկեարին երեք օր կողոպտել քաղաքը: Նորանց հետ

Էլ միացել էին և ուրիշները թուրք, հայ, միլիցիա, մի խօսքով  
ամենքն էլ կողոպտում էին... Մանելով տների մէջ՝ որոնում էին  
անկիւնները, ներքնատները, ծածուկ տեղերը, ինչ որ ձեռքներն  
էր ընկնում, տանում էին, բանդեցին քաղաքը:

Օսմանի զայրշին ընդհատուեց՝ երբ հասանք գետին,  
որին տեղական թուրքերն և հայերը անուանում են Կարսչայ,  
իսկ ի հնումն Ափուրեան, ինչպէս վկայում են Զամշեանը, Ա-  
լիշանը և այլք. Սա սկիզբն առնելով Սոլանլուի լեռներից ըն-  
թանում է դէպի արևելք թախս կոչուած դաշտավայրի միջով:  
Քաղաքին հասած՝ նորա լսյն և աղատ ափերը սեղմում են  
սեղաձեւ ժայռապատ ձորի մէջ, կազմելով երկու հրուանդան,  
որոց մինի վերայ շինուած էր Զիմթարիա մարտկոցը, իսկ  
միւսի վերայ, բարձրաբերձ ժայռերից կազմուած, իրոխտաբար  
նայում է միջնաբերդը:

Նա իւր օձանման պտոյաներով կիսում է քաղաքը արե-  
մելեան մեծ և արևեմտեան փոքր մասերի. Արևելեան մասը  
փոքր ի շատէ տափարակ տեղի վերայ է, իսկ արևմտեանը  
սփռուած է ժայռակազմ լանջերի վերայ, Երկու մասերն էլ  
միանում են իրաք հետ երեք կամուրջների միջոցով. Հայերի  
մեծամասնութիւնը ընակւում էր ձախ կողմում, որ կոչում էր  
Զոլիսուր մահլայ, իսկ թուրքերն ըստ մեծի մասին տարածուած  
էին աջ ափում: Գետի հոսանքով ամենաստորին կամուրջը եր-  
կու քարէ սիւների վերայ կանգնած, վրան ծածկուած էր հո-  
ղով և իճով:

Դորանից վեր կանգնած է երկրորդ կամուրջը սրբատաշ  
քարից, երեք կամարով, առանց արձանագրութեան. Հաւանա-  
կան է որ նա շինուած լինի ծդ դարու սկզբում հայերի ձեռ-  
քով: Սա այժմ կոչում է Հարավսան օղլի: Սորանից դէպի  
վեր երրորդ կամուրջն է, առանց կամարի, որի սիւները կրա-  
շաղախ են և քարաշէն, կազմում են ութն աչք, իսկ վերը  
ծածկուած է փայտէ գերաններով, խճով և հողով. Սոյն ձևով  
շինած է չորրորդ և վերջին կամուրջը, որ քաղաքի վերջումն է:

ՔԱԶՐԱԽՐՈՒԵՒ

(Կը շարունակուի)